

մասնաւոր պատճեամբ մասն մասնաւոր պատճեամբ այս պատճեամբ  
առաջը առաջ առաջանաւոր և առաջան պատճեամբ առաջ առաջ

## ԳՐԱԽՈՍՈԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ

«Արարատ»ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ  
ստացել է յարգելի ֆրանսիացի Ֆր. Մակերից «Հայկական  
Մանրանկարչութիւն» գեղեցիկ հրատարակութիւնը տպուած  
Փարիզում։ Յայտնի է՝ որ ո. Էջմիածնի միաբան Տ. Գարե-  
գին վարդապետը վերջին 6—7 տարուայ մէջ ի մի է ժո-  
ղովել ու էջմիածնի հարուստ մատենադարանի, Երուսաղեմի  
և այլ տեղերի ձեռագիրներից Հայկական մանրանկար-  
չութեան վերաբերեալ նշանաւոր նկարները, որի համար  
էլ Յունիար ամսին մեկնեց արտասահման այնտեղ տպա-  
գրելու իւր ժողովածուն։ Յարգելի ֆր. Մակերի հրատա-  
րակութիւնը մի մասն է այն հարուստ ժողովածուի, որ  
ունի Տ. Գարեգին վարդապետ։ Սոյն համարում գետեղում  
ենք Տ. Մեսրոպ վարդապետի գրախօսականը պ. Մակերի  
հրատարակութեան առթիւ իսկ այստեղ առաջ ենք բերում  
այդ հրատարակութեան ֆրանսիերից թարգմանած յա-  
ռաջաբանը՝ լսելու իրեն պ. Մակերի խօսքերն իւր հրա-  
տարակութեան մասին։

### ՑԱՌԱՋԱԲԱՆ

Իմ մի քանի ճանապարհորդութեանց ընթացքում, որոնք  
մասնաւորապէս նուիրուած էին հայ բանսիրութեան և հայոց  
պատմութեան վերաբերեալ հետազոտութեանց, առիթ ունեցայ-  
տեսնելու մի քանի ձեռագրեր, որոնց մէջ ամփոփուած են հայ  
արուեստի արտադրութիւններ, արժանի առանձին ուշադրութեան։  
Խնքս այս ճիշդի մէջ մասնագէտ Հինելով՝ պիտի շատանամ այդ  
արտադրութիւնները ծանօթացնելով լուսանկարների միջոցով,  
յարակցելով այս վերջիններին նկարագրական շատ համառօտ տե-

զեկութիւններ։ Սրուեսատի պատմութեամբ զբաղուողները և յատ-  
կապէս բիւզանդագէտներն ու արևելագէտները անշուշտ օգտուե-  
լու հն սոյն հրատարակութիւնից և ճանաչելու շահնեկանութեան  
այն նոր բաժինը, որ սա հայթայթելու է նրանց։ Սրա շնորհիւ  
նրանք պիտի կարողանան անհրաժեշտ համեմատութիւններն անել  
լուսաբանելու համար փոքր ինչ այն գեռ ևս մթին խնդիրը, որ  
ներկայացնուում են արևելան և բիւզանդական արուեստների միջև  
եղած փոխադարձ առնչութիւնները, ու թերեւ նաև արևելքի գոր-  
ծած աղղեցութիւններն արևմուտքի վրայ կամ արևմուտքի աղղե-  
ցութիւններն արևելքի վրայ։

Հայերէն ձեռագրերը, որ հեշտութեամբ կարելի է քննել  
Եւրոպայի մասնաւոր և հանրային մատենադարաններում, ենթա-  
գրել են տալիս մի մեծ զարգացում ու կատարելութիւն, որին  
հասել են այս փոքրիկ ժաղովրդի մանրանկարիչներն ու գեղազիր-  
ները։ Ուրիշ լսուքով այս ազգի մէջ զարերով գոյութիւն են ու-  
նեցել անուանի զպրոցներ, որոնց մէջ աւանդում էր մանրա-  
նկարչութեան արուեստը։ Այս զպրոցների մասին գեռ ոչ մի ամ-  
րողական աշխատութիւն լոյս չի տեսել, և գուցէ գեռ ժամանակ  
էլ չէ։ Դրա համար պէտք է սպասել մի այնպիսի հրատարակու-  
թեան, որ աւելի առատ լինի ձեռագրերի յիշատակարաններից  
քաղուած թանկազին տեղեկութիւններով։ Այս բանը գլուխ կը  
գայ միայն այն ժամանակ, երբ լիակատար ցուցակների միջոցով,  
որ գեռ չկան, տեղեկանանք այն զանձերին, որ պարունակում են  
եջմիածնի հայրապետական Աթոռի, Երուսաղէմի Ս. Յակովբանց  
վանքի և Վենետիկի Ս. Ղազարի Միսիթարեան հարց մատենադա-  
րանները։

Մինչ այդ՝ ես կը տամ այսաեղ մի քանի տեղեկութիւններ  
Մելիտինէի և Վանի մասին, որոնք հաւանօրէն կարեոր կենտրոն-  
ներ են եղած հայ գեղազիրների ու մանրանկարիչների։ Այս երկու  
քաղաքներին նախապատռութիւն տալուս պատճառն այն է, որ  
հրատարակածս Նկարների մեծ մասը արտադրութիւն է սոյն երկու  
քաղաքներից մէկի կամ միւսի և կամ դրանց անմիջական շրբ-  
ջակայքից։

Յր. Մալլեր